

## «ԸՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

ՀՅԴ 125-ամյակին նվիրված գիտաժողով \*

2015 թ. դեկտեմբերի 9-10-ին՝ ՀՅ Դաշնակցության 125-ամյակի միջոցառումների շրջագծում, ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «ԸՅ Դաշնակցությունը և Հայոց պետականությունը» թեմայով գիտաժողով, որին մասնակցում էր գիտնականների և մտավորականության բավականին ներկայացուցչական կազմ ինչպես Հայաստանից, այնպես էլ Սփյուռքից:

Դեկտեմբերի 9-ին, առավոտյան ժամը 10-ին ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում իր աշխատանքները սկսած գիտաժողովի առաջին նիստում բացման խոսքով հանդես եկավ ՀՅ Դաշնակցության Բյուրոյի ներկայացուցիչ **Հրանտ Մարգարյանը**: Նա իր ելույթում կարևորեց Հայաստանի առաջին Հանրապետության և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հիմքերը դնելու գործում կուսակցության ունեցած մեծ ներդրումը նորովի ուսումնասիրելու և հանրությանը ներկայացնելու առաջադրանքը: Այնուհետև Հ. Մարգարյանը հստակեցրեց, որ սահմանադրական փոփոխությունների ներկա հանգրվանում զգացվում է ազգային պետականության որոշակի ու հստակ բնորոշի՝ Հայաստանի առաջին Հանրապետության պատմության առավել բարդ ու վիճահարույց հարցերի խորքային ուսումնասիրության կարիքը: ՀՅ Դաշնակցության Բյուրոյի ներկայացուցչի կողմից ոչ պակաս կարևորություն տրվեց պետականության կառուցման ճանապարհին հայության ներսում ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում իրենց զգացնել տվող հատվածականության դրսևորումների ուսումնասիրության և ապագայում մեր ժողովրդին դրանցից զերծ պահելու առաջադրանքին: Հ. Մարգարյանը գիտաժողովի նպատակն ուղեգծեց որպես «նեղ-ակադեմիականից» զատ նաև «գիտագործնական» ուղղվածություն ունեցող, որից ակնկալվում են խորքային գնահատականներ և դրանց վրա հիմնվող արժեքավոր առաջարկներ ու եզրակացություններ:

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ուղղված խոսքով հանդես եկավ ճանաչված պատմաբան ու գիտության հմուտ կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վլադիմիր Բարխուդարյանը**: Նա կարևորեց ՀՅ Դաշ-

Ի. (ԺԳ) փարի, թիվ 4 (52) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015  
ՎԿՎ համահայկական հանդես

\*Ընդունվել է տպագրության 30.12.2015:

նակցության 125-ամյակին նվիրված գիտաժողովի անցկացումը՝ հաշվի առնելով հայոց Նոր պատմության մեջ կուսակցության խաղացած առանցքային դերակատարությունը, ինչպես նաև նրա հիմնադիրների բարոյաքաղաքական ժառանգության այժմեականությունը:

Հայ գրականագետների անունից ելույթ ունեցած՝ ԳԱԱ Գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր **Վարդան Գևորգյան** ընթերցեց ականավոր գրականագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Սերգեյ Սարինյանի** ողջունի խոսքը գիտաժողովի մասնակիցներին: Ողջունի խոսքերով ու բարեմադթանքներով հանդես եկան նաև նիստին ներկա ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. դոկտոր **Էդիկ Մինասյանը** և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ռուբեն Սաֆրաստյանը**:

Գիտաժողովի առաջին նիստում, որն ընթացավ պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ Ազգային արխիվի տնօրեն **Ամատունի Վիրաբյանի** նախագահությամբ, ընթերցվեցին չորս զեկուցումներ:

«Վէմ» հանդեսի խմբագիր, պատմ. գիտ. դոկտոր **Գևորգ Խուդինյանի** «Հայոց պետականության ՀՅԴ տեսլականը 19-րդ դարի վերջերին–20-րդ դարի սկզբներին» ուշագրավ ելույթը Հայոց Նոր պատմության հոլովություն ՀՅԴ պետականաստեղծ գործառույթի քաղաքակրթական բովանդակությունը բացահայտելու փորձ էր: Նրա կարծիքով՝ ՀՅԴ պետականաստեղծ առաքելության հաջողության գաղտնիքը 600-ամյա ընդմիջումից հետո Հայոց պատմության գաղափարը կրկին գործի վերածելու սխրանքի մեջ էր, ինչի արդյունքում ավերակներից ու քաոսից ծնունդ առավ Հայաստանի առաջին Հանրապետությունը: Բացահայտելով այդ գաղափարի էությունը՝ զեկուցաբերը ներկաների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ Հայաստանի ու հայկական մշակույթի վերելքի դարաշրջաններն ինչպես հեռավոր անցյալում՝ հելլենիզմի ու վաղ քրիստոնեության շրջանում, այնպես էլ Նոր ժամանակներում համընկել են այն դարակազմիկ պատմական զարգացումների հետ, երբ Արևմուտքն իբրև քաղաքակրթական բևեռ բախել է Արևելքի դռները: Նրա կարծիքով՝ «Նոր ժամանակներում հայ ժողովրդի ծոցից ելած միակ քաղաքական ուժը, որը ոչ միայն գիտակցեց Հայոց պատմության այս առանցքային օրինաչափությունը, այլև փորձեց իր միտքն ու գործն ուղղորդել մեր ներսում այդ հին համադրության նոր կերպավորմանը հասնելու խնդրի լուծմանը, դա Հայ Յեղափոխական Դաշնակցությունն էր», որը ձևավորվեց եվրոպական լուսավորականության արժեհամակարգի ուղղակի ու միջնորդավորված ընկալման ու յուրացման ճանապարհով: Այնուհետև զեկուցաբերը ներկայացրեց ազգային-ազատագրական պայքարի բովում ՀՅԴ ջանքերով Հայոց պետականության գաղափարի հասունացման հիմնական հանգրվանները և նրանցում արձանագրված ձեռքբերումները: Այս տեսանկյունից վերլուծության ենթարկելով Հայաստանի շուրջը ներկայումս ընթացող քաղաքակրթական գործընթացները՝ Գ. Խուդինյանը եկավ այն ուշագրավ եզրակացությանը, որ «Հայաստանի նոր վերելքը և նրա տարածքների ամբողջացումը հնարավոր է միայն այն պարագայում, երբ իրենց ձևով տարբեր, բայց էությամբ նույնական մայրցամաքային կայսրությունների՝ միշտ էլ մեզ համար երկսայրի

սուր հանդիսացող դիմակայությունների մղձավանջին մեր տարածաշրջանում փոխարինի այն քաղաքակրթության գերակայությունը, որն արժեքային առումով հոգեհարազատ է հայկական մշակույթին»:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր **Արարատ Հակոբյանը** «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական կառավարման փորձը» գեկուցման մեջ հանգամանալից անդրադարձավ Առաջին Հանրապետության պետական կառավարման համակարգին՝ բացահայտելով հայկական պառլամենտարիզմի ակունքները, վերլուծելով 1918 թ. Հայաստանի Խորհրդի ձևավորման, խորհրդարանական կառավարման առանձնահատկությունների, կուսակցական խմբակցությունների գործունեության, համամասնական ընտրական համակարգի որդեգրման, 1919 թ. խորհրդարանական ընտրությունների և ՀՅԴ Բյուրո-կառավարության գործունեության ընթացքն ու արդյունքները: Զեկուցման վերջում ներկայացվեցին հիմնավորված եզրահանգումներ:

Պատմական անցյալի փաստարկված վերլուծությունը Ա. Հակոբյանը լավագույնս զուգակշռել էր Առաջին և Երրորդ Հանրապետությունների պետական կառավարման համակարգերի պատմահամեմատության քննությանը՝ նկատի ունենալով Հայաստանում ընթացող Սահմանադրության փոփոխության գործընթացը:

ԵՊՀ դասախոս, պատմ. գիտ. թեկնածու **Լևոն Մկրտչյանն** իր «ՀՅ Դաշնակցությունը Հայաստանի երրորդ Հանրապետության քաղաքական կյանքում» գեկուցման մեջ հանգամանորեն ներկայացրեց արտաքին ու ներքին այն մարտահրավերները, որոնք պայմանավորեցին 1990 թ. օգոստոսին Հայաստանում իր կազմակերպական ներկայությունը բացահայտած ՀՅԴ քաղաքականությունը: Այնուհետև բացահայտվեցին Արցախյան գոյամարտում և Երրորդ Հանրապետության ներքաղաքական կյանքում ՀՅԴ դերակատարության հիմնական հանգրվանները<sup>1</sup>:

ԿԳՆ Գնահատման և թեստավորման կենտրոնից պատմ. գիտ. թեկնածու **Արմեն Ասրյանն** իր «Արամ Մանուկյանի անհատականությունը՝ որպես պատմակերտ գործոն» գեկուցման մեջ ներկայացրեց Հայաստանի առաջին Հանրապետության ձևավորման գործում Արամ Մանուկյանի կատարած անհատական ներդրումը:

Գիտաժողովի երկրորդ նիստը, որը վարում էր ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան **Էդիկ Մինասյանը**, սկսվեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Մեսրոպ Աճյան» սրահում դեկտեմբերի 9-ին՝ ժամը 14.30-ին:

ԳԱԱ Պատմության ինստիտուտից պատմ. գիտ. թեկնածու **Լիլիթ Հովհաննիսյանի** ներկայացրած թեման՝ «ՀՅ Դաշնակցությունը և Հայաստանի երկու մասերի քաղաքական կարգավիճակի հարցը 1917 թվականին», նվիրված էր Հայաստանի առաջին Հանրապետության ձևավորմանը նախորդած իրադարձությունների քննությանը:

Կուպայան վարժարանից պատմ. գիտ. թեկնածու **Աննա Ասատրյանն** իր «ՀՀ պառլամենտի դերը տեղական ինքնակառավարման մարմինների

<sup>1</sup> Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «ՀՅ Դաշնակցությունը և Հայոց պետականությունը» հորեյանական գիտաժողովի նյութերը հրապարակվելու են առանձին գրքույկով, սահմանափակվում ենք ընթերցված գեկուցումների բովանդակության համառոտ ներկայացմամբ:

կազմակերպման և ամրապնդման գործում 1918–1920 թթ.» գեկուցման մեջ վերլուծության ենթարկեց ՀՀ օրենսդիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունները 1918–1920 թվականներին:

ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» գինվորական թանգարանի տնօրեն, պատմ. գիտ. թեկնածու **Ավագ Հարությունյանի** «Պետական և կուսակցական մոտեցումների պայքարը ՀՅԴ ներսում Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում» գեկուցումը նվիրված էր 1918–1920 թթ. պետականաշինության գործում հանդես եկած այսպես կոչված՝ «պետական» ու «կուսակցական» մոտեցումների հակասությունների ու պայքարի ներկայացմանը:

ԵՊՀ դասախոս, պատմ. գիտ. թեկնածու **Կարեն Հայրապետյանի** «Հատվածականության հաղթահարման ՀՅԴ քաղաքականությունը Առաջին Հանրապետության շրջանում» ուշագրավ գեկուցման մեջ քննության ենթարկվեցին 1918–1920 թթ. ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում հանդես եկած արևելահայ-արևմտահայ հակասությունները՝ դրանք զուգահեռելով ներկայումս Երրորդ Հանրապետության քաղաքական կյանքում ի հայտ եկած այս երևույթի նոր՝ «հայաստանցի-դարաբաղցի» դրսևորման հետ:

ՀՀ Պաշտպանության նախարարությունից պատմ. գիտ. թեկնածու **Արամ Սայիյանի** «Ապստամբ Դերսիմը 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին» գեկուցումը բացահայտեց մինչ օրս հայ հետազոտողներին անձանոթ այն իրողությունը, որ մեր ժողովրդի համար ողբերգական ավարտ ունեցած 1920 թ. պատերազմի նախօրեին և ընթացքում Դերսիմում ծավալված ապստամբությունն այդպես էլ չի օգտագործվել քեմալականների ուժերը արքանի մեջ վերցնելու և փոշիացնելու համար:

ԵՊՀ պրոֆեսոր **Ալեքսանդր Սաֆարյանի** «ՀՅԴ պատմության նենգափոխումը խորհրդային թուրքագետների աշխատություններում» գեկուցման մեջ քննադատության ենթարկվեցին Հայոց ցեղասպանության պատմության նենգափոխման միջոցով խորհրդային շրջանում ՀՅԴ հասցեին ուղղված ամբաստանությունները:

Խ. Աբովյանի անվ. Մանկավարժական համալսարանից փիլիսոփ. գիտ. թեկնածու **Դավիթ Մոսինյանի** «Վարազդատ Տերոյանի «Սոցիալիզմ և սոցիալիզմ» աշխատության գիտատեսական բովանդակությունը» գեկուցումը նվիրված էր Վան-Վասպուրականի ճանաչված մտավորական, Արամ Մանուկյանի հոգեզավակ **Վարազդատ Տերոյանի**՝ սոցիալիզմի տեսության ու պրակտիկայի վերաբերյալ մինչ օրս քչերին հայտնի աշխատության վերլուծությանը:

Գիտաժողովի երրորդ նիստը, որը կայացավ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Մեսրոպ Աճյան» սրահում 2015 թ. դեկտեմբերի 10-ին, վարում էր պատմական գիտությունների դոկտոր **Գևորգ Խուդինյանը**:

Արցախի պետհամալսարանից պատմ. գիտ. թեկնածու **Տարոն Հակոբյանն** իր «ՀՅ Դաշնակցության դերը Լեռնային Ղարաբաղի պետականության ձևավորման գործում (1991–1992 թթ.)» գեկուցման մեջ ներկայացվեց Արցախի պետական անկախության հռչակմանը հաջորդած առաջին տարիներին ԼՂՀ և ՀՀ քաղաքական ղեկավարության միջև առաջ եկած տարաձայնությունները, ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ **Արթուր Մկրտչյանի** և ՀՀ առաջին նախագահ **Լ. Տեր-Պետրոսյանի** բարդ հարաբերությունների՝

մինչ օրս անհայտ մանրամասները:

Ներկաների կողմից ուշադրությամբ լսվեցին ու բազմաթիվ հարցերով ընդմիջվեցին նաև Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտից պատմ. գիտ. դոկտոր **Համլետ Գևորգյանի** «Թուրքական արշավանքի կասեցման նախապատրաստական աշխատանքները Երևանի նահանգում (1918 թ. փետրվար-մարտ)», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտից՝ **Կարոլինա Սահակյանի** «ՀՅ Դաշնակցության 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գործունեությունը օսմանյան պատմագրության գնահատմամբ», Խ. Աբովյանի անվ. Մանկավարժական համալսարանից պատմ. գիտ. դոկտոր **Վանիկ Վիրաբյանի** «Հայաստանի առաջին Հանրապետության հետախուզական ծառայության գործունեության պատմաքաղաքական դասերը», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտից պատմ. գիտ. թեկնածու **Քրիստինե Մելքոնյանի** «ՀՅ Դաշնակցությունը և Հայկական հարցը 1945-1960 թթ.» և ԵՊՀ-ից **Սամսոն Հովհաննիսյանի** «Պոստոսի հիմնախնդիրը հայ-հունական հարաբերությունների համատեքստում (1918-1920 թթ.)» զեկուցումները:

Գիտաժողովի երրորդ նիստի վերջում տեղի ունեցավ քննարկում, ինչպես նաև՝ վերջին տարիներին ՀՅԴ հրատարակած գրքերի և պարբերականների շնորհանդես: Ծավալված ակտիվ ու շահագրգիռ քննարկմանը ակտիվորեն մասնակցեցին նաև Սփյուռքի տարբեր համայնքներից ՀՅԴ 125-ամյակի հոբելյանական միջոցառումներին ժամանած մտավորականներն ու գիտնականները: Մասնավորապես՝ ՀՅԴ պատմության վավերագրերն ամփոփող բազմաթիվ հատորների հեղինակ **Երվանդ Փամբուկյանը**, Սփյուռքում ճանաչված դասախոսներ և կուսակցական գործիչներ **Տիգրան Զինբաշյանը** և **Մկրտիչ Մկրտչյանը** (Բեյրութ), «Ասպարեզ» օրաթերթի խմբագիր **Արո Պողիկյանը** (Լոս Անջելես) և ուրիշներ իրենց հարցերով ու ելույթներով բազմաթիվ պարզաբանումներ և դիտողություններ ներկայացրին ընթերցված զեկուցումներում առկա որոշ վիճահարույց դրույթների վերաբերյալ:

Ա. Հ.

**“ARF DASHNAKTSUTYUN AND THE ARMENIAN STATEHOOD”**

Symposium on the occasion of the 125th anniversary of the ARF

A. H.

**“АРФ ДАШНАКЦУТЮН И АРМЯНСКАЯ ГОСУДАРСТВЕННОСТЬ”**

Научная конференция по случаю 125-летия АРФД

A. A.